

# ՀՀ ՏԿԶ նախարար Սուրեն Պապիկյանը մասնակցել է Վայոց ձորի մարզի Արենի համայնքում <Գաստրո քակ> գինետան բացման արարողությանը

17.04.2019



Այսօր ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար Սուրեն Պապիկյանը մասնակցել է Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Արենի բնակավայրում <Գաստրո քակ> գինետան բացման հանդիսավոր արարողությանը: Նախարար Սուրեն Պապիկյանին ուղեկցել են ՀՀ Վայոց ձորի մարզպետ Տրդատ Սարգսյանը և Արենի համայնքի ղեկավար Հուսիկ Մահակյանը: Հայաստանում ՌԴ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ալեքսեյ Մինեգուբովը և Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիյասինը:

Գաստրո քակերի հայեցակարգի իրականացման ծրագիրը մեկնարկել է դեռևս 2018 թվականին: Անցած տարի գաստրո քակեր են բացվել Տավուշի և Արագածոտնի մարզերում:

Գաստրո քակերը յուրահատուկ զբոսաշրջային վայրեր են, որտեղ զբոսաշրջիկները հնարավորություն ունեն համտեսել հայկական ուտեստներ, ականատես լինել գինու ստեղծման ընթացքին և շփվել տեղի բնակիչների հետ:

Նախարար Սուրեն Պապիկյանն իր բացման խոսքում շնորհակալություն է հայտնել ՌԴ կառավարությանն ու ՄԱԿ-ի Զարգացման ծրագրին՝ Հայաստանի գյուղական համայնքներում զբոսաշրջային ենակառուցվածքների զարգացման հայեցակարգը կյանքի կոչելու համար և նշել, որ այս անգամ արդեն Արենիում գաստրո քակի կառուցումը ևս մեկ նշանակալի նախադեպ կարող է հանդիսանալ Հայաստանի մյուս համայնքների համար: <Մենք շահագրգռված ենք Հայաստանի գյուղական համայնքներում տուրիզմի զարգացման հեռանկարով, և գաստրո քակերի մշակույթի ներդրումը հիանալի հնարավորություն է այն կյանքի կոչելու համար: Գյուղական համայնքների կոլորիտային առօրյան նման նախադեպով ներկայանալի

դարձնելը լրացուցիչ խթան կհանդիսանա, որպեսզի մեր համայնքները և՛ բնակիչների, և՛ զբոսաշրջիկների համար դառնան ավելի գրավիչ, տեսանելի ու ,հիարկե հետաքրքիր>,- ասել է նախարարը:

<Ես հույս ունեմ, որ գաստրո բակը կհետաքրքրի բազմաթիվ զբոսաշրջիկների և կդառնա նրանց սիրված վայրերից մեկը, որտեղ նրանք կզգան հայկական շունչն ու տրամադրությունը>,- իր խոսքում նշել է Հայաստանում ՌԴ դեսպանության արտակարգ դեսպանորդ և լիազոր նախարար Ալեքսեյ Սինեգուբովը:

<Ուրախ եմ այսօր գտնվել այստեղ և ազդարարել գաստրո բակի բացումը: Լիահույս եմ, որ զբոսաշրջիկներն այստեղ կվայելեն հայկական ավանդական ուտեստներ, կձանթանան տեղի մշակույթին և անպայման կվերադառնան նոր հիշողությունների ակնկալիքով: Բակի ամենակարևոր գործառույթներից է ձևավորել մշակույթ տեղական համայնքներում և ոգևորել տեղի բնակիչներին՝ վերածել զբոսաշրջությունը եկամտի կայուն աղբյուրի: Այս յուրատեսակ բակի հիմնումը կարևոր քայլ է այդ ուղղությամբ>,- ասել է Հայաստանում ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դմիտրի Մարիյասինը:

<Ինտեգրված գյուղական զբոսաշրջության զարգացում> ծրագիրն աջակցում է Հայաստանի գյուղական համայնքներին՝ ստեղծելու այլընտրանքային եկամտի աղբյուրներ գյուղաբնակների համար զբոսաշրջության զարգացման միջոցով: Ծրագրի առաջնային խնդիրներից է կրթել և ներգրավել տեղական համայնքներին՝ քաջալերելով նրանց մշակել նոր լուծումներ զբոսաշրջիկներին գրավելու համար:

<Գաստրո բակ> գինետունը պատկանում է Արենիի բնակիչ Հայկ Ստեփանյանին:

Աղբյուրը՝ <http://mtad.am>, 17.04.2019